

ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

- Բանկում դրամային և արտարժույթային հաշիվներ կարող են բացել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ՀՀ տարածքում կամ օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները (այդ թվում՝ իրավաբանական անձինք, միջազգային կազմակերպությունները), նշված կազմակերպությունների համաձայնությամբ նրանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և առանձնացված այլ ստորաբաժանումները, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը:

- Նախքան Հաշիվների բացումը՝ Բանկի աշխատակցի կողմից հաճախորդները մանրամասն տեղեկացվում են հաշիվների բացման հետ կապված տվյալ ժամանակահատվածում Բանկում գործող սակագներին:

- Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդները և անհատ ձեռնարկատերերը բանավոր տեղեկացվում են այն մասին, որ եթե Հաշիվը մնում է ժամանակավոր այն բացելու օրվանից 30 օրացուցային օրից ավելի, ապա տվյալ Հաշվից սկսվում է գանձվել Հաշվի սպասարկման միջնորդավճար, եթե այդպիսին սահմանված է Բանկում գործող սակագներով:

- Եթե հաճախորդն իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր, Հաշվի բացման վերաբերյալ վերջինիս կողմից դրական որոշում կայացնելու դեպքում հաճախորդը Բանկ է ներկայացնում Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, եթե ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի (E-register) տվյալների շտեմարանում տվյալները կամ փաստաթղթերը բացակայում են կամ սխալ են, որից հետո Սպասարկող աշխատակցի կողմից իրականացվում է հաճախորդի տվյալների մուտքագրում կամ թարմացում և, ըստ անհրաժեշտության, հաճախորդի ստորագրմանն է ներկայացվում «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկը և Հաշվի բացման դիմումը: Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդների դեպքում դիմումն ընդունող աշխատակիցը Հաշվի բացման դիմումում [eFO 72-01-06](#), գրում է իր անուն-ազգանունը և ստորագրում այն: Ընդ որում՝ Հաշիվ բացելիս Բանկը կարող է պահանջել նաև այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ընթացիկ (հաշվարկային) հաշիվների բացման, վարման, հսկման և փակման ընթացակարգով:

- Ներկայացված փաստաթղթերի հիման վրա Բանկը կայացնում է որոշում Հաշիվ բացելու կամ չբացելու վերաբերյալ:

- Ֆիզիկական անձ հաճախորդի Հաշիվը բացելու վերաբերյալ Բանկի կողմից դրական որոշման կայացման դեպքում Սպասարկող աշխատակիցը բացում է Հաշիվը: Հաճախորդի Հաշվի բացման վերաբերյալ բացասական որոշման դեպքում հաշիվ չի բացվում, և գործընթացն ավարտվում է:

- Եթե հաճախորդն իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր և Հաշիվը բացելու վերաբերյալ Բանկի կողմից կայացվել է դրական որոշում, ապա Սպասարկող աշխատակիցը լրացնում է հաճախորդի վերաբերյալ պահանջվող տվյալները և բացում ժամանակավոր հաշիվ: Ընդ որում՝

- ա) ժամանակավոր հաշիվ բացվում են միայն իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար,

- բ) ժամանակավոր հաշիվ գործառնություններ իրականացնել չի թույլատրվում:

Ժամանակավոր հաշիվ բացելու օրվանից 30 օրացուցային օր հետո տվյալ հաշվից սկսում է գանձվել Հաշվի սպասարկման միջնորդավճար, եթե այդպիսին սահմանված է Բանկում գործող սակագներով:

Ժամանակավոր հաշիվը բացելուց հետո (այդ թվում՝ նույն անձի կողմից Բանկում նոր Հաշիվ բացելիս) բացված հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունն առցանց համակարգի միջոցով ուղարկվում է ՀՀ Հարկային տեսչություն՝ այն հաշվառելու համար:

Հաճախորդի Հաշվի բացման վերաբերյալ բացասական որոշման դեպքում հաշիվ չի բացվում, և գործընթացն ավարտվում է:

- Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում Սպասարկող աշխատակիցը ծրագրից տպում է նաև Ընթացիկ հաշվի սպասարկման սակագներ փաստաթուղթը՝ երկու օրինակից և ներկայացնում հաճախորդի ստորագրմանը: Հաճախորդը ստորագրում է «Ստացա» բառի դիմաց և մեկ օրինակը վերադարձնում աշխատակցին:

- Հաշվի սպասարկման պայմանագրերը ստորագրվում են հաճախորդի և պայմանագիրը

ստորագրելու լիազորություն ունեցող Բանկի աշխատակցի միջև: Ընդ որում հաճախորդի ցանկության դեպքում հաշվի պայմանագրի իր օրինակը կարող է կնքվել մասնաճյուղի կողմից:

- Հաշիվը բացելուց հետո Ընթացիկ հաշվի պայմանագրի մեկ օրինակը հանձնվում է հաճախորդին:

- Երկու կամ երեք ֆիզիկական անձինք Բանկում կարող են բացել համատեղ հաշիվ: Այս դեպքում Ընթացիկ հաշվի պայմանագիրը ստորագրվում է յուրաքանչյուր հաճախորդի կողմից: Համատեղ հաշվի տնօրինման իրավունքները և կարգը սահմանվում են Ընթացիկ հաշվի պայմանագրով: Համատեղ հաշիվը տնօրինող անձինք համատեղ հաշվով գործառնություններ կարող են իրականացնել առանձին-առանձին՝ Ընթացիկ հաշվի պայմանագրով սահմանված կարգով:

Համատեղ հաշվի բացման դեպքում Սպասարկող աշխատակիցը ծրագրից տպում է նաև Ընթացիկ հաշվի սպասարկման սակագներ փաստաթուղթը՝ համապատասխանաբար երեք կամ չորս օրինակից և ներկայացնում հաճախորդների ստորագրմանը: Հաճախորդները ստորագրում են բոլոր օրինակների «Ստացա» բառերի դիմաց և փաստաթղթի մեկ օրինակը վերադարձնում Բանկի աշխատակցին՝ յուրաքանչյուրն իր մոտ պահելով մեկական օրինակ:

Եթե Համատեղ հաշիվը բացողներից մեկը հանդիսանում է ոչ ռեզիդենտ, ապա Համատեղ հաշիվը բացվում է որպես ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի հաշիվ:

- Չի կարող Հաշիվ բացվել, եթե հաշվետերը ներկա չէ կամ այդ նպատակով որևէ երրորդ անձ է հանդես գալիս նրա անունից, բացառությամբ, սույն փաստաթղթի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված որոշ դեպքերի.

- 1) Ֆիզիկական անձ հաճախորդների համար կարող է հաշիվ բացվել առանց հաշվետիրոջ ներկայության, եթե հաշիվը բացվում/վերաբացվում է վարկի տրամադրման նպատակով և փաստաթղթերի էլեկտրոնային կնքման առաջարկը (օֆերտան) հաճախորդի կողմից ստորագրվում է էլեկտրոնային եղանակով,

- 2) Այն դեպքում, երբ հաճախորդն օգտվում է «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգից, կարող է առանց Բանկ այցելելու «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգով բացել նոր ընթացիկ հաշիվ:

- Իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդներն «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգով ընթացիկ հաշիվ բացել չեն կարող:

- «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգով ընթացիկ հաշիվ բացելու համար հաճախորդը ծրագրում լրացնում է պահանջվող դաշտերը, ծանոթանում Ընթացիկ հաշվի բացման և սպասարկման պայմանագրին: Հաճախորդը ծրագրի համապատասխան դաշտում կատարում է պայմանագրին ծանոթանալու փաստը հավաստող նշում, որից հետո հաշվի բացման հայտն ուղարկում է Բանկ:

- Հայտը Բանկի կողմից հաստատելու դեպքում հաճախորդին «ACBA DIGITAL» WEB տիրույթում էլեկտրոնային եղանակով հասանելի են դառնում Ընթացիկ հաշվի բացման պայմանագիրը և դրան կից ավանդների երաշխավորության հատուցման ծանուցումը:

- Հաճախորդի կողմից «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգում հաշիվների ցուցակից այնպիսի արժույթներ ընտրելու դեպքում, որոնց գծով արդեն կան բացված գործող հաշիվներ, վերջինս պետք է ներկայանա իրեն սպասարկող Բանկի մասնաճյուղ գրավոր եղանակով հիմնավորելու նույն արժույթով կրկին հաշիվ բացելու նպատակը:

- Հաճախորդը պետք է ներկայանա Բանկ նաև այն դեպքում, երբ ցանկանում է «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգով բացված Ընթացիկ հաշվի պայմանագրի և ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ծանուցման կրկնօրինակը ստանալ թղթային եղանակով:

- Բանկում հաճախորդի համար վարկային հաշիվ բացվում է վարկային պայմանագրի և հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջ փաթեթի հիման վրա:

ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄԸ

- Հաճախորդն իրավունք ունի փակել Հաշիվը՝ այդ մասին գրավոր դիմելով Բանկին: Ընդ որում՝

- ✓ Ֆիզիկական անձը Բանկ պետք է ներկայացնի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ.

✓ Իրավաբանական անձը պետք է ապահովի ըստ հաստատված ստորագրությունների և կնիքի նմուշների քարտի առաջին կարգի ստորագրության իրավունք ունեցող անձանցից որևէ մեկի ներկայությունը վերջինիս անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթով:

✓ Անհատ ձեռնարկատերը պետք է ապահովի ըստ հաստատված ստորագրությունների և կնիքի նմուշների քարտի առաջին կարգի ստորագրության իրավունք ունեցող անձանցից որևէ մեկի ներկայությունը՝ վերջինիս անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթով:

• Հաշվի փակման դիմումը ստորագրվում է իրավասու անձի կողմից և չեկային գրքույկի չօգտագործված մասի հետ ներկայացվում է Սպասարկող աշխատակցին՝ հաշիվը փակելու թույլտվություն ստանալու նպատակով, ընդ որում՝ ֆիզիկական անձ հաճախորդների դեպքում հաշվի փակման դիմումի ընդունումը հավաստելու նպատակով հաճախորդին տրամադրվում է դիմումի պատճենը: Դիմումի պատճենը ստանալուց հետո ֆիզիկական անձ հաճախորդը ստորագրում է Բանկի օրինակի (դիմումի քնօրինակի) համապատասխան դաշտում, որով հավաստում է, որ ստացել է դիմումի պատճենը:

• Հաճախորդի դիմումը ստանալու նույն օրը Բանկը պարտավոր է փակել հաճախորդի Հաշիվը, բացառությամբ ստորև նշված դեպքերի:

Բանկն իրավունք ունի հրաժարվել հաճախորդի Հաշիվը փակելուց, եթե՝

ա) հաճախորդը Բանկի նկատմամբ ունի չմարված պարտավորություններ:

բ) Հաշվի մնացորդը գրավադրված է, և չկա Ընթացիկ հաշիվը փակելու վերաբերյալ գրավառուի համաձայնությունը:

գ) Հաշվին առկա է մնացորդ:

դ) օրենքով և կնքված առանձին պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

«ա»-ից «դ» կետերով նախատեսված դեպքերում Հաշվի պայմանագիրը շարունակում է իր գործողությունը մինչև Հաշվի փակման համար խոչընդոտ հանդիսացող հանգամանքների վերացումը: